

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳՈ. ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԿԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Դրակ V

1950

Выпуск V

Ա. Ա. ՄԵԼՐԱԲՅԱՆ

ԿՈՐՆԳԱՆԻ ՊԱԼԱՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՏՈՐՆԵՐԸ
ԵՎ ԱՆՏԱԳՈՆԻՍՏՆԵՐԸ

(Նախնական հաղորդում)

Դեռևս 18-րդ դարում շատերն այն միտքն էին հայտնում, թե բայց սրբի արմատները ոչ միայն ընդունում են զանազան սննդաբար նյութեր, այլև իրենք արտադրում են գրանք: Օրինակ՝ Սաքսը, ապա և ուրիշներն ապացուցեցին, որ արմատներն արտադրում են զգալի քանակությամբ ածխաթթու, որն ուժեղ չափով ազդում է հանքային նյութերի լուծելիության վրա: Արմատներն արտադրում են նաև օրգանական և զանազան հանքային նյութեր, բացի այդ՝ նրանք հողում թողնում են մազարմատներ և էպիգերմիսի մակերևսի քայլքայլած, մեռած բջիջներ, որոնք նույնպես կարող են զանազան միկրոօրգանիզմների համար որպես սննդի աղբյուր հանդիսանալ:

Հետազոտողներից շատերն զբաղվել են այն հարցով, թե այս կամ այն նյութը հաղում ինչպիսի փոփոխության է ևնթարկվում միկրոօրգանիզմների կազմից: Բույսը, որպես հիմնական որոշիչ օրենք, տվյալ հարցի պարզաբանման ժամանակ հաշվի չէր առնվազ, այնինչ, ինչպես ցույց են տալիս ժամանակակից հետազոտողները, միկրոօրգանիզմների զարգացման ընթացքում հզոր գործոն է հանդիսանում հենց ինքը բույսը:

Բույսերի արմատները շրջապատող հզոր, ինչպիս ցույց են տալիս վերջին տարիների ուսումնասիրությունները, հանգիսանում է այն վայրը, որտեղ բիոլոգիական պրոցեսներն ընթանում են ավելի բուռն այսպիսով, արմատային սիստեմը հզոր գործոն է հանդիսանում միկրոօրգանիզմների ընտարության և կատակման գործում:

Այն հանգամանքի հետևանքով, որ մեծ քանակությամբ բակաերիներ են կուտակվում արմատների շուրջը, ակամայից հարց է ծագում, թե ինչ դեր են խաղում նրանք բույսի կյանքում:

Գետք է նշել նաև, որ սիզոսֆերայում կարող են դարձանալ այնպիսի միկրոօրգանիզմներ, որոնք տարբեր ձևով են աղղում բռւյսի վրա. օրինակ՝ որոշ միկրոօրգանիզմներ ստիմուլացիայի են ենթարկում բռւյսի աճը, ուրիշները ճնշում են, կան նաև այնպիսիները, որոնք բռւյսի կյանքում նկատելի փոփոխություններ չեն առաջացնում:

Կողլովսկին, ուսումնասիրելով հողի բակտերիաների մի քանի տեսակների աղղեցությունը բռւյսերի աճման վրա, պարզեց, որ *B. fluorescens denitrificans*-ը և *Pseudomonas* բացառություններ ուժեղ չափով ճնշում են գարու աճեցողությունը:

Կրասիլնիկովի, Ռիրալկինայի, Կրիսի և ուրիշների (Красильников и др., 1934, 1935) ինչպես նաև Օրբազզովայի (Образцова, 1936) դիտողությունների համաձայն, բակտերիաների թիվը մի քանի անգամ ավելի մեծ է սիզոսֆերայում, քան կոնտրոլ հաղում: Հողում բնակվող բակտերիաներից շատերը, մասնավոր նրանք, որոնք զարգանում են արմատների շուրջը, դրական աղղեցություն են թաղնում բռւյսի աճի վրա:

Հացահատիկների բերքը սերմերի բակտերիզացիայի հետեւ վանքով բարձրանում է $12-30\%$ ՝ ովզ. Շելումովան (Шеловина, 1938) ազոտարակտերը կիրառելով հացահատիկների և այլ կուլտուրաների վրա, ստացել է նույնպես զբական տվյալներ. Նրա կիրառած ազոտովեն պրեպարատը բներքի հավելում է ավելածակնդեղի մոտ՝ $21-30\%$, գարու մոտ՝ $9-38\%$, վաւշի մոտ՝ $9-38\%$, ցորենի մոտ՝ $21-24\%$, վարսակի մոտ՝ $18,6-37,3\%$ և այլն:

Բռւյսի աճը ստիմուլացիայի ենթարկող բակտերիաները հետազայում անվանվեցին ակտիվատորներ, իսկ հակառակ աղղեցություն գործողները, այսինքն ճնշողները՝ անտադրնիունները:

Ինչ վերաբերում է բակտերիաների՝ բռւյսերի վրա աղղելու մեխանիզմին, դեռ կոնկրետ որեւէ բան ասել չենք կարող. ակնհայտ է միայն այն, որ այդ աղղեցությունը տարբեր պայմաններում պայմանավորվում է տարբեր գործոններով՝ մի գեղագում բակտերիաները կարող են հողում աղոտ կուտակել, եղիքորդ գեպքում՝ փոխել հանքային աննդառության պայմանները, երբորդ գեպքում՝ որոշ բակտերիաներ կարող են բռւյսը պաշտպանել զանազան սնկային և բակտերիալ հիվանդություններից և, վերջապես, չորրորդ գեպքում՝ բռւյսի վրա կարող են աղպել կենսագործունեության հետևանքով ստացված պրոդուկտներավ.

Կորնդանի պալարարականների ուսութիւնառիքության ընթացքում թե հողից և թե արմատներից, բացի պալարարականներին և մենք մեկուսացրել ենք նաև 36 շամամ ոչ պալարարականներ:

Մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե ինչպիսի փոխարարերության մեջ են գտնվում նրանք կորնդանի պալարարականներին հետ, արդյոք բարձրացնում, թե ընդհակառակը, թուլացնում են նրանց ակտիվությունը: Այս հարցը պարզելու համար մենք կիրառել ենք երեք մեթոդ, ըստ որում, առաջին մեթոդի գեպքում ոչ պալարարականների 36 շամաներն առանձինառանձին աճեցրել ենք էշրի-աղարի և լրուադարի խառը սննդանյութերի վրա՝ Պետքի թասերում՝ 1: 1 հարարերությամբ:


Այդ շամանները, լրիդ աճեցրությունից հետո, ենթարկել ենք առերիխղացիայի և յուրաքանչյուր թասում, սննդանյութը սառչելուց հետո, ցանել կորնդանի պալարարականները. յուրաքանչյուր շամամ ոչ պալարարականներայի համար հատկացրել ենք երեք զույգ Պետքի թասեր: Ամեն մի թասի սննդանյութը բաժանել ենք վեց մտափ և յուրաքանչյուր մասում ցանել առանձին կորնդանի պալարարականներ, որից հետո թասերը գրվել են առեմսուստի մեջ՝ 25—28⁰ ջերմության պայմաններում:

Ցանքի 3—4-րդ օրը կատարված դիտողություններից պարզվել է, որ ոչ պալարարականներից երկուսը՝ 275 և № 7-ը հանդիսանում են ակտիվատորներ, որոնք կորնդանի պալարարականների հետ համատեղ աճեցրությունը, երկուսն էլ հանդիսանում են անտաղոնիստներ և հակառակ ազդեցություն են թողնում, այսինքն՝ կասեցնում են կորնդանի պալարարականների աճը (տես նկար 1):

Նկար 1-ում ցույց են տրված Պետքի երկու թասեր. առաջին թասում, նախքան պալարարականներ ցանելը, աճեցրել ենք պնտագոնիստ բակտերիաներ, որոնք լրիդ աճելուց հետո, ավտոկլավում ենթարկել ենք ոտերիլիզացիայի 1,5 մթնոլորտային ձևման տակ՝ 15 րոպե, ապա ցննդանյութը սառչելուց հետո, ցանել ենք կորնդանի պալարարականներայի ակտիվ շտամը:

Պետքի երկրորդ թասում, ակտիվատորն աճեցնելուց հետո, ցանվել է նույն շտամը:

Ինչպես պարզվում է, Պետքի առաջին թասում պալարարականներն ոչ մի աճ ցույց չի տվել, Պետքի երկրորդ թասում,



Նկ. 1



Նկ. 2

բնդհակառակը, պալարարակտերիան ուժեղ աճ է տվել, անդամ ավելի ուժեղ, քան կոնտրոլ թասում⁷(նկար 2), որտեղ պալարարակտերիան ցանվել է առանձին, առանց ակտիվատորի և անտաղունիստի:


Ակտիվատոր և անտաղունիստ շատմի հայտնաբերման երկրորդ փորձը գրվել է հետևյալ կերպ—Պետրիի թասը լորի-ազարով բաժանվել է հինգ մասի և սննդանյութի յուրաքանչյուր մասում ցանքս է կատարվել հետեւյալ սխեմայով.

1. Կորնդանի ակտիվ շտամ № 11+ակտիվատոր № 17
 2. » » » № 11+անտաղունիստ № 7
 3. » » » № 11 առանձին
 4. Անտաղոնիստ շտամ № 7 առանձին
 5. Ակտիվատոր շտամ № 17 առանձին.
- Այդ փորձը բերվում է նկար 3-ում:

Այստեղ, ինչպես ցույց է տալիս նկարը, կորնդանի № 11 սկափիվ շամամը, ակախվատոր № 17-ի հետ համատեղ աճելու գեղագում՝ տալիս է շատ ավելի ուժեղ աճ, քան թե նույն միջավայրում այդ շամամն առանձին աճելու գեղագում և ընդհակառակը, անտագոնիսատ № 7-ի հետ աճելիս ակնհայտ է նրա ճնշման ազդեցությունը: Նույն օրինաչափությունը նկատվում է նաև մյուս ակախվատորի և անտագոնիսաի հետ աճեցնելու գեղագում (աես նկար 4):



Նկ. 3



Նկ. 4


Վերը նկարագրված այս երկու մեթոդները կիրառել է նաև Աղարյանը (Ազարյան, 1948) վիկի պալարաբակաերիաների ուսումնասիրության ժամանակ. նրա մոտ ևս պարզ կերպով արտահայտում է ակախվատոր և անտագոնիսատ շամամների ազդեցությունը վիկի պալարաբակաերիաների ակտիվ շամամների վրա:

Այսուհետեւ, մեր մեկուսացքած ակախվատոր և անտագոնիսատ շամամների ազդեցությունը կորնդանի պալարաբակաերիաների ակտիվ շտամների վրա, դարձյալ լարորատոր պայմաններում ստուգելու համար, մենք կիրառել ենք մի երրորդ մեթոդ ևս, որն ավելի քան հասաւառում է առաջին ու երկրորդ մեթոդների ճշտությունը և ավելի ցայտուն դարձնում ակախվատոր ու անտագոնիսատ շամամների ազդեցությունը (աես նկար 5):

Այս նկարում պատկերված է Պետրիի թասը, որտեղ հետազոտական կորնդանի պալարաբակաերիայի շտամն է գտնվում ակտիվատոր շամամի հետ: Այստեղ, ինչպես տեսնում ենք, ոչ մի

սահման ու զոնա չկա այդ երկու կուլտուրաների միջև, երկուս
էլ համատեղ ուժեղ՝ աճել են, մեկը մյուսին ընդհուպ մոտեցած:

Մյուս թասում այդ նույն պալարաբակտերիան ցանվել
անտագոնիստ և շտամփի հետ, անտագոնիստի աղդեցություն
կորնգանի պալարաբակտերիայի վրա արտահայտվում է
նկարում:



Նկ. 5



Նկ. 6

Ինչպես տեսնում ենք, առաջացել են բավական նկատելի
զննաներ:

Այս մեթոդի կիրառման ժամանակ նախապես հետազոտվող
կորնգանի պալարաբակտերիայի ցանք է կատարվում լորու-հե-
ղուկի մեջ և զրվում է տերմոստատում՝ $25-28^{\circ}$ ջերմության
պայմաններում:

Մեկ օրից հետո, միօրյա կուլտուրայից մեկ օդակ զրվում
է լորու-ազարով լցված Պետրիի թասի կենտրոնում, այնուհետեւ
այդ օդակը շպատելով համաշափորեն տարածվում սննդանյութի
մակերեսին, որից հետո ասեղի ծայրով ակտիվատոր շտամփից
վերցնելով մի փոքր մաս, զնում ենք երկու տեղ:

Այսպիսով, մեր մեկուսացրած ոչ պալարաբակտերիաների
աղդեցությունը կորնգանի պալարաբակտերիաների ակտիվ շտամ-
փերի վրա լարութառը պայմաններում փորձարկելուց հետո պարզ-
վեց, որ նրանցից երկուսը հանդիսանում են բավական ուժեղ
ակտիվատուրներ, իսկ երկուսը՝ անտագոնիսաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Азарян Э. Х.—1948. Влияние штаммов активаторов и антагонистов, выделенных из ризосферы вики, на ее клубеньковые бактерии. Труды Института земледелия АН Армянской ССР, № 1.
- Красильников Н., Рыбалкина А., Габриэлян М. и Кондратьева Р.—1934. К микробиологической характеристике почв Заволжья. Тр. ком. по ирригации АН СССР, т. 1, вып. 3.
- Красильников Н., Крисс А. и Литвинов М.—1936. Микробиологическая характеристика ризосферы культурных растений. Микробиология, том V.
- Образцова А. А.—1936. Микроорганизмы ризосферы в батумских красноземах. Изв. АН СССР, сер. биолог., № 1.
- Шелоумова А. М.—1938. Азотоген. Бактериальное удобрение и его применение.

А. А. Меграбян

Активаторы и антагонисты клубеньковых бактерий эспарцета

(Предварительное сообщение)

Р е з յ ո ւ մ

В 1950 году нами проводилась работа по выделению разных физиологических групп микроорганизмов из ризосферы эспарцета.

Цель этой работы заключалась в выяснении взаимодействия микроорганизмов ризосферы с клубеньковыми бактериями эспарцета для поднятия эффективности нитрагина.

Для выявления активаторов и антагонистов нами применялись три метода.

При первом методе все штаммы, выделенные из ризосферы, высевались на чашках с питательной средой. По истечении нескольких дней, после хорошего роста штаммов, чашки ставились в автоклав на стерилизацию. После застыивания агара на них высевался штамм клубеньковой бактерии. В случае, когда испытуемый штамм из ризосферы являлся активатором, на чашке получался обильный

рост клубеньковой бактерии. В случае же antagonизма роста не намечалось.

Второй метод заключался в том, что среда делилась на пять частей и в каждой части засевался штамм из ризосферы, а сверху, по той же линии, штамм клубеньковой бактерии эспарцета.

Когда штамм из ризосферы оказывался активатором, при совместной культуре получался обильный рост. Роста не бывало, или же намечался слабый рост, когда штамм оказывался antagonистом.

Наконец, третий метод заключался в том, что из однодневной жидкой культуры клубеньковой бактерии эспарцета бралась одна петля и равномерно распределялась по всей поверхности агаровой среды, затем на этой же чашке ставился маленький комочек слизи бактерии, выделенной из ризосферы эспарцета, через определенный промежуток времени культуры клубеньковой бактерии и испытуемого штамма сливалась, в случае же antagonизма образовывалась довольно большая зона.

Наши исследования показали, что различные микрорганизмы по разному действуют на клубеньковые бактерии эспарцета, одни стимулируют, другие угнетают рост клубеньковых бактерий.

Выделенные из ризосферы эспарцета активаторы № № 275 и 17, при совместном посеве с клубеньковыми бактериями № № 11 и 15, дают богатый, хороший рост.

Штаммы antagonистов № № 7 и 267, при совместном посеве, в одном случае роста не дают, в другом образуют ясно выраженную зону. Эти опыты иллюстрированы в соответствующих фотоснимках.